



EU4Energy



1 փետրվարի 2020թ.

ԵԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱԸ ՀԱՅՏ

Ծրագիր «ԵՄ հանուն Հայաստանի կայուն Էներգետիկայի» (EU4ASEP)
Դրամաշնորհ՝ ENI/2017/393-496

Ծրագրի անվանումը – Մասնագիտական ծառայություններ Ապարանում և Արթիկում արևային ՖՎ կայանների կառուցման լուսաբանման տեսանյութի պատրաստման համար

Ներածություն

Եվրոպական Միության «Քաղաքացիների դաշնագրի նախագծերի» EuropeAid/155713/DH/ACT/Multi դրամաշնորհային մրցույթի արդյունքում «Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» ՀԿ և «Համայնքների Միություն» ՀԿ համատեղ առաջարկը հավանության արժանացել էվրամիության կողմից, և կնքվել է դրամաշնորհի համաձայնագիր 718,000 եվրո արժեքով: Դրամաշնորհի ներքո ծրագիրը (ԵՄ հանուն Հայաստանի կայուն Էներգիայի) մեկնարկել է 2018թ. փետրվարի 1-ին: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի համայնքներում կայուն Էներգիայի խթանմանը: Էներգախնայողության աջակցման հիմնադրամը սույնով հրավիրում է գնային առաջարկներ՝ վերոհիշյալ ծրագրի շրջանակներում վարը բերված առաջադրանքի կատարման համար:

Առաջարկի նպատակը

Եվրոպական Միության դրամաշնորհային ծրագրով Էներգախնայողության աջակցման հիմնադրամը՝ «ԵՄ հանուն Հայաստանի կայուն Էներգետիկայի» ծրագրի շրջանակներում Ապարան և Արթիկ քաղաքներում իրականացում է վերականգնվող Էներգետիկայի խթանման ծրագրեր՝ արևային կայանների շինարարություն:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկարահանել 5 րոպեանոց ֆիլմ Ապարանում իրականացվող ծրագրի, 5 րոպեանոց ֆիլմ Արթիկում իրականացվող ծրագրի մասին և 3 րոպեանոց ամփոփ, կարճ ֆիլմ երկու ծրագրերի մասին:

Այդ տեսանյութերը պետք է համապարփակ կերպով ներկայացնեն արևային Էներգետիկայի ընձեռած հնարավորությունները, կարևորությունը, ծրագրի ձեռքբերումները և տեսանելի ազդեցությունը համայնքների համար: Հիմնական դերակատարները պետք է լինեն ծրագրերի շահառուները: Տեսանյութը պետք է ուղղված լինի լայն լսարանին:

Պատասխանատվությունների նկարագրություն

Փորձագետը պատասխանատու է վավերագրական տեսաֆիլմերի համար անհրաժեշտ նկարահանումների, սցենարական աշխատանքի և վերջնական արդյունքի համար: Տեսաֆիլմերը պետք է ներառեն հետևյալը՝

- Ծրագրի շրջանակներում Ապարան և Արթիկ քաղաքներում արևային կայանների շինարարության աշխատանքները /շինարարության սկզբից մինչև պաշտոնական բացում/
- Հարցազրույցներ ծրագրի գործընկերներ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ

- Ծրագրի ընթացքում իրականացվող իրազեկման, ուսուցման և կրթական միջոցառումների ամփոփ ներկայացում
- Ծրագրի ներգործության երկրարաժամկետ ազդեցությունը ներկայացնող ինֆորագրաֆիկաներ՝ խնայված էներգիայի քանակը բնեղեն և դրամական արտահայտությամբ, սոցիալական ներգործությունը էներգիայի մատչելիության և «էներգետիկ աղքատության» համատեքստում

5 և 3 թույլ տևողությամբ վարվերագրական ֆիլմերի նկարահանման և պատրաստման ընթացքում մասնագիտական խումբը պետք է ներկայացնի.

- Վավերագրական տեսաֆիլմերի մանրամասն սցենարներ,
- Բոլոր նախնական/անմշակ տեսանյութերը ստացված նկարահանման ընթացքում,
- Վավերագրական տեսաֆիլմերը կրիչի վրա թվային ձևաչափով և DVD-ի սկավառակի վրա հայերեն և անգլերեն ուղեկցող տեքստով /տիտրերով/ հեռուստատեսային հեռարձակման և համացանցով տարածման համար օպտիմալ որակով:

Տեսաֆիլմերի նկատմամբ ընդհանուր պահանջները՝

- Թիրախային խումբը՝ ՀՀ բնակչություն, պետական մարմինների ներկայացուցիչներ
- Ոճը/տեսակը՝ վավերագրական,
- Ուղեկցող տեքստը՝ հայերեն, անգլերեն տարբերակը՝ տիտրերով,
- Առաջարկվող մանրամասն սցենարը (ներառյալ ստեղծագործական գաղափարը, տեքստը և այլն) պետք է համաձայնեցվի Ծրագրի ղեկավարության հետ:

Ծրագրի փորձագիտական խումբն ապահովում է համապատասխան խորհրդատվությամբ, որը հարկավոր է ծրագրի օգուտների վերաբերյալ մանրամասն պատկերացում ստանալու համար, ապահովում է անհրաժեշտ ամբողջական տեղեկությամբ և նյութերով ըստ հաստատված սցենարի, ներառյալ Ծրագրի գործունեության, ձեռքբերումների և ներգործության մասին մանրամասն տեղեկություն, աջակցություն շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցներ կազմակերպելու համար, եթե դրանք նախատեսվեն, ինչպես նաև բոլոր առկա լուսանկարները և տեսանյութերը:

Հայտերի գնահատումը կիրականցվի նվազագույն գնի և նմանատիպ աշխատանքների կատարման փորձի հիման վրա:

Առաջարկները ներկայացնել՝

Աստղինե Պասոյան, Գործադիր տնօրեն

Էներգախնայողության աջակցման հիմնադրամ

Գրանցման հասցեն՝ 92-29 Ջրաշատ փ, Երևան 0019

Ֆիզիկական հասցե՝ Էլիտ Պլազա, գրասենյակ # 414, Երևան 0002

Պետ.գրանցման համար՝ 222.160.00218, ՀՎՀՀ՝ 00081855

Էլ.փոստի հասցե՝ apasoyan@esfarmeria.org, astghine@gmail.com

Հեռ՝ +374 (0)93.611.619; +374(0)93.930.030